

Ամենէն երիտասարդը, Մազբոս, ցանցին մէջ ինկաւ ապականեալ կնոյ մը, որուն շատ հաճելի թուեցաւ հրաշքի առարկայ եղած մարդ մը գլխէ հանել եւ իբր սիրական ունենալ երկու հարիւր քսան տարեկան երիտասարդ մը, Ուրիշ մը, Մաքսիմիանոս, յաւակնեցաւ իր մաքրութեան մէջ վերահաստատել եղծուած կրօնքը: Գառուղիներուն մէջ կը քարոզէր, քահանաներուն ու հարուստներուն դէմ գոռալով, ու բանտարկուելէն ուրիշ արդիւնք ձեռք չձգեց: Միւս հինգ Դանադներուն ցաւը, անձկութիւնն ու ձանձրոյթը ատով բազմապատկուեցան: Հասկեցան թէ երբեք պիտի չկարենային վարժուիլ այն բաներուն զոր կը տոնէին. եւ իրիկուն մը, աղաչեցին Աստուծոյ որ զիրենք նորէն ընացնէ մինչեւ վերջին դատաստանը: Հետեւեալ օրը, մեռած գանուկեցան իրենց խռով մէջ: Իրենց դէմքը «վարդերու թարմութիւնը» պահած էր:

ՕԻՒՒ, ԼԸՄԵԹՐ

ՓԱՐԻԶԻ ՎԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Պ. Մանթաշեանի ծախքով կառուցուած հայկական եկեղեցիին օծումը կատարուեցաւ Հոկտ. 2ի կիրակի օրը: Փարիզի Հայերը խուռն բազմութեամբ եկած էին ներկայ գտնուիլ, ու Պատարագին աւարտումէն յետոյ Պ. Մանթաշեանին յայտնեցին իրենց շնորհակալութիւնը:

Օտարներ չէին հրաւիրուած, եւ սակայն, մինք գիտենք որ շատ մը Ֆրանսացի անձնաւորութիւններ կը փափաքէին ներկայ գտնուիլ այդ հանդէսին, այդ առթիւ Հայոց եկեղեցիին երաժշտութեան վրայ որոշ գաղափար մը կազմելու եւ միանգամայն այդպիսի հանդէսի մը ներկայ գտնուելով անգամ մը եւս Հայոց նկատմամբ իրենց համակրութիւնը յայտնելու համար. անհրաժեշտ էր հրաւիրել հայասէր Ֆրանսացիները, ինչպէս եւ Փարիզի կաթոլիկ ու բողոքական, նոյն իսկ յոյն ու ասորի, կղերին բարձրագոյն ներկայացուցիչները, մանաւանդ Փարիզի արքեպիսկոպոս՝ կարտինալ Բիշարը որ — պէտք չէ մոռնա՛նք — 1897 Մատչէն եկեղեցոյն մէջ հանդիսաւոր պատարագ մատուց հայ նահատակներուն հոգւոյն համար, ինչպէս եւ Ֆրոման արքան որ այդ օրը հոյակապ եւ

սրտաբուխ քարոզ մը խօսեցաւ քրիստոնէութեան համար շարժարուող Հայաստանը փառաբանելով. առկա պարտականութիւնն ըմն էր որ պէտք էր կատարուէր: Ու բացատրելու իսկ պակցը չուներք բարոյական միմ օգուտը զոր ամէկը կրնար քաղել մեր ազգը: Փարիզի Հայոց Թաղական Խորհուրդը այդ հրաւերը չէ ուզած ընել թեւեւ՝ նկատելով որ կանոնաւոր երաժշտական խումբ մը գոյութիւն չունենալով, հրաւիրեալ օտարականները շատ լաւ տպաւորութիւն մը պիտի չկրէին օծման հանդէսէն. բայց միթէ արդէն բացարձակապէս անհրաժեշտ չէ՛ր կանոնաւոր երգեցիկ խմբի մը կազմութիւնը օծումէն առաջ, ոչ միայն օծման հանդէսը ներկայանալի ընելու համար օտարներուն, այլ նոյն իսկ որովհետեւ ատի անուրանալի «պէտք» մըն է եկեղեցիին ներքին պայծառութեանը համար:

Հաճոյքով կ'իմանանք որ Փարիզի Հայոց Թաղական Խորհուրդը այժմ ինքն ալ սկսած է զգալ այդ պէտքին կարեւորութիւնը եւ մտադիր է միջոցներ ձեռք առնել զայն ի կատար ածելու, օգտուելով Պ. Շահ-Մուրադեանի ներկայութիւնէն ի Փարիզ: Պ. Շահ-Մուրադեանց, Կոմիտաս վարդապետի աշակերտներէն է, Եկմալեանի խումբը վարած է քանի մը տարի, շատ լաւ գիտէ Հայոց եկեղեցական երաժշտութիւնը, եւ օժտուած է հզօր ու շատ քաղցր ձայնով մը. իր առաջնորդութեամբ խումբի մը կազմութիւնը միծապէս կը դերահայ: Փարիզի հայ գաղութը շատ լաւ կարող է, — եւ սիրալոթաբար պատրաստ է — հայթայթել ներթափանցողութիւնը որ պէտք են այդ ծրագիրն իրագործելու համար. գեղեցիկ ու կանոնաւոր երգեցողութիւնը գլխաւոր շարժառիթներէն մին է որ եկեղեցին միշտ բազմութեամբ լեցուն պահելու կը նպաստէ, այնպէս որ ան՝ ինքնին՝ կը հանէ ծախքը որ պիտի յատկացուի այդ նպատակին: Ու երբ երգեցիկ խումբը կազմուի, ո եւ մեծ տօնի առթիւ՝ կարելի պիտի ըլլայ հրաւիրել օտար հայաւերները հանդիսաւոր պատարագի մը: «Լաւ է ուշ քան երբեք»:

L.e Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGRAMADJIAN
18, Rue des Gobelins, l'aris.